կերպով և ճոխ ծրագրով տօնեց հոկտեմբերի 13-ի ազգային մեծ հանդէսը՝ հայ տառերի և տպագրութեան յօբելեանը։

Իսկ քաղաքային ռուսաց ուսումնարանի վարչութիւնը շուտով տօնելու է Հայրենական պատերազմի 100-ամեայ յօբելեանը՝ աւելի մեծ հանդիսով և աւելի ճոխ ծրագրով, որին մասնակցելու հրաւիրված էր հայոց ծխ. դպրոցի ձայնագրութեան ուսուցիչ Գ. Ղազարեան երաժշտական-երգեցիկ խումբ կազմելու և օրվայ պատշաճի երգեր դնելու համար։

Մի տօն ևս անհրաժեշտ է կողմնակերպել, որ վերաբերում է դարձեալ հայոց ծխ. դպրոցների մանկավարժական և հոգաբարձական կազմերին. դա մեր քաղաքի հայոց ծխ. դպրոցի 60-ամեայ յօբելեանն է, որ լրանում է այս տարի և որի համար նախօրօք յայտնել եմ «Մշակի» միջոցով։ Այդ պատճառով մեր դպրոցի վարչութիւնը իր անմիջական պարտականութիւնն է համարելու մի համեստ հանդէսով տօնելու նաև ծխ. դպրոցի գոյութեան 60 ամեակը, քանի որ դպրոցը իր գոյութեան ամբողջ ընթացքում պակաս առաջադիմութիւն չէ արել ժողովրդական կրթութեան և մտաւոր զարգացման վերաբերմամբ։ Ուստի մեր ժողովուրդը՝ ձեռք-ձեռքի տուած դպրոցի վարչութեան հետ՝ պէտք է ընդ առաջ գնայ դպրոցի 60-ամեայ յօբելեանին և իր փայփայանքին արժանացնէ այդ կուլտուրական տօնը։

Գ. Սինանեան

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԻ ԱՐՁԱԳԱՆԳԸ ԳԱՒԱՌՈՒՄ

I

Հոկտեմբերի 13-ին Նոր-Նախիջևանի Հայոց Բարեգործական Ընկերութեան նախագահ Գր. Չալխուշեան հետևեալ հեռագիրն է ուղարկել Էջմիածին, բայց հեռագրական թելի փչացած լինելու պատճառով՝ նոյն օրը չէր հասել։

«Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ V-ին։

«Նոր-Նախիջևանի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը հրճուանքով ողջունում է կուլտուրայի և լուսաւորութեան այսօրվայ մեր տօնախմբութիւնը»։

II

Ցղնա, 22 հոկտեմբերի

Տեղիս հայոց ծխական դպրոցի հոգաբարձութիւնը ուշ ստանալով վարչութիւնից ազգային այբուբենի գիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան սկզբնաւորութեան 400-ամեայ յօբելեանների ծրագիրը, չը կարողացաւ իր ժամանակին կատարել այդ համազգային տօնը։ Ուստի ամսիս 20-ին, առաւօտեան ժամը 10 ին, տեղիս հայոց եկեղեցում բազմաթիւ ժողովրդի ներկայութեամբ հանդիսաւոր պատարագից յետոյ կատարվեց հոգեհանգիստ գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին, որից յետոյ զգեստաւորված քահանան երգեցիկ խմբով «Նմանեալ Մովսիսի» շարականը երգելով բազմութեան հետ անցաւ դէպի ուսումնարանի դահլիճը, որը զարդարված էր գորգերով և ծաղիկներով, որոնց մէջ աչքի էին ընկնում խոշոր ծաղկատառերով զարդարված «1500» և «400» թւանշանները։

Շարականից յետոյ քահանան «Հայր մեր»ով բացեց հանդէսը, և աւագ ուսուցիչը, որի ջանքով կազմվել էր այդ ցերեկոյթը, մի քանի խօսքով բացատրեց հանդիսականներին տօնի նշանակութիւնը։ Աշակերտական երգեցիկ խումբը շարունակ երգում էր մանկական երգեր, որի վերջում աշակերտ-աշակերտուհիներին ձրիապէս բաժանվեց քաղցրեղէն։

Այդ օրը երեկոյեան նոյն դպրոցի դահլիճում մի խումբ սիրողների մասնակցութեամբ տրվեց ձրի մի ներկայացում. խաղացին հանգուցեալ Սունդուկեանի «Պէպօյի» երկրորդ և երրորդ գործողութիւնը և «Շփոթված ծառան» վօդեվիլը՝ թարգմանութիւն ռուսերէնից։

Ներկայացմանը գլխաւորապէս հրաւիրված էին աշակ.-աշակերտուհիների ծնողները։ Պէտք է ասած, որ թէ ցերեկոյթը և թէ ներկայացումը անցան շատ գեղեցիկ և հանդիսականները ուրախ տրամադրութեան տակ ցրվեցին դահլիճից։ Տէրն-եմ

ՆԱՄԱԿՆԵՐ ՆԱՒԹԱՇԽԱՐՀԻՑ

XX

Ստրուկ հոգիները

Բագու, 1 հոկտեմբերի

«На ворѣ шапка горитъ»,—ասում է ռուսական առածը, որ հոգեբանօրէն շատ ճիշդ է։

Իմ թղթակցութիւններիցս մէկի մէջ («Կեցցէ անանկութիւնը»), ես հասարակութեան առաջ էի դրել այստեղ դիրք ու պատիւ վայելող մի կապիտալիստի կեանքը, և այն միջոցները, որով նա հասել էր նիւթական այդպիսի մի բարեկեցիկ վիճակի, մի վիճակի, որը ստիպել էր մարդկանց մոռանալու նրա արածները և այսօր գլուխ խոնարհեցնելու նրա առաջ։

Որքան էլ ես փակ էի գրել, անուններ չէի տուել, բայց այդ փաստը այնքան ակնյայտ է բոլորի համար, ամեն ոք այնքան լաւ ճանաչում է այդ անձնաւորութեանը, որ ոչ ոքի մէջ մի րոպէ անգամ կասկած չէր կարող ծագել, որ ես գրելուց առաջ ի նկատի եմ ունեցել իսկապէս այդ անձնաւորութեանը։

Եւ իմ թղթակցութիւնը լոյս տեսնելուց հասարակական որևէ տեղ, երբ պատահում էին ինձ մեր ընդհանուր ծանօթները, իսկոյն սեղմում էին ձեռքս և շնորհակալութիւն յայտնում, որ ես պատռել էի մի դիմակ։

Եւ, խոստովանում եմ, մի րոպէ ես հաւատացի այդ մարդկանց, մի րոպէ թւաց ինձ, որ մարդիկ վերջապէս զգում են ամեն մի վատ արարք, և ուրախ են լինում, երբ այդ արարքը հրապարակ է հանվում։

Բայց, աւաղ, ես սխալված էի։

Այո, ճիշդ է, մարդիկ իսկապէս զգում էին այդ, բայց նրանք միշտ էլ սիրում են փուշը ուրիշի ձեռքով քաղել և «своя хата съ краю» անել։

Անցեալ օրը ես փողոցում պատահում եմ իմ մի ծանօթիս, և մօտիկ ծանօթիս, որը կանգնած խօսում էր ենթադրեալ մի տիպի անձնաւորութեան հետ։ Ես բարևեցի. բայց բաւական չէ, որ բարևիս պատասխան չը ստացայ, այլ նոյնիսկ նա երեսը շրջեց ինձանից, և երբ նոյն օրը երեկոյեան ես թատրոնում հարցրի նրա այդ վարմունքի պատճառը, նա, առանց կարմրելու, ահա թէ ինչ պատասխանեց.

— Գիտես, ես նրա հետ կապված եմ առևտրական կապերով և անյարմար է, եթէ նա իմանայ, որ մենք ծանօթ ենք, որովհետև այդ կարող է վատ ազդել իմ գործերի վրայ։

Եւ այդ ասողը մէկն էր նրանցից, որ առաջինն էր սեղմել իմ ձեռքը և շնորհակալութիւն յայտնել թղթակցութեանս համար։

Ինչ արած, այդպէս են մեզ մօտ մարդիկ։

Փոխանակ միասին, ձեռք ձեռքի տուած գրոհ տալու և հասարակական ասպարէզներից հեռացնելու անհամակրելի մարդկանց, ամեն կերպ դեռ քծնում են նրանց առաջ, ոտքերը լիզում և դրանով աւելի առիթ տալիս նրանց, հաւատացած լինելով որ իրանք ստորութիւն չեն արել, որ միևնոյն է լաւ արած թէ վատ, փողը ամեն ինչ ծածկելու, ամեն կեղտ լուանալու է։

Եւ միթէ այդ մի դժբաղդութիւն չէ մեր հասարակութեան համար։

Վաղարշակ Թումանեան

ՇՈՒԼԱՎԷՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԿԵԱՆՔԻՑ

—

Շուլավէր, 22 հոկտեմբերի

Շուլավէրի և Բօրչալուի I գաւառամասի համար օր-ցօր ստեղծվում են մի շարք յարմարութիւններ. մինչ օրս Շուլավէրում պօստը ստացվում էր շաբաթական երեք անգամ, ամսիս 15-ից ստացվում է ամեն օր։

Գիւղացու ամենակարևոր կարիքներից մէկը, որ կազմում էր ճանապարհների կանոնաւոր հաղորդակցութեան գործը, այդ էլ կամաց-կամաց ուղղվում է։

Բօրչալուի գաւառամասի և Շուլավէրի արդիւնաբերութիւնը, որի շատ մասը ենթարկվում էր փչանալու ճանապարհների անկանոնութեան պատճառով, որ և առիթ էր ծառայում հաստափոր աղաների կիսագնով ապրանքներ ձեռք բերելուն, այժմ վերանում են մէջտեղից և՛ այդ արգելառիթները, որովհետև երկաթուղու գծի Ախշղա-Սարալ կայարանը վերածվում է ապրանքատար կայարանի. իսկ Շուլավէրից դէպի Ջալալ-օղլի Ախքօրփի գիւղի միջով անցնող ճանապարհը, որը երկար տարիներ մնացել էր անխնամ և փչացել, այդ ճանապարհի կարիքը ի նկատի ունենալով Բօրչալուի գաւառապետ Բաբրօվսկին, որպէսզի գիւղացիներին ազատի ամենադժուար երթևեկութիւնից, ամեն ճիգ թափեց և գաւառի ազգաբնակութեանը պարտաւորեցրեց հասարակական համախօսականներով, որ իրանց ծախսով վերակառուցեն յիշեալ ճանապարհը, որը միակ յարմարութիւնը ունի սար գնալ-գալու համար ապրանքներ փոխադրելու Լօռի, իսկ այնտեղից Շուլավէր, Բօրչալու և Թիֆլիս։ Շուլավէրի հասարակութիւնը ուրախութեամբ ընդունելով գաւառապետի առաջարկութիւնը և գտնելով որ այդ ճանապարհը թէ կարճութեան և թէ բնութեան գեղեցկութեան պատճառով միակ յարմար ուղին է կազմում, ինքը առաջինն եղաւ, որ համախօսական տալով խոստացաւ, բացի իր պարտականութիւնից, որ պէտք է կառուցի իր մաս ճանապարհը, վճարել և 1000 րուբլի աւել, որպէսզի շուտով սկսվի գործը։ Միւս հասարակութիւնները խրախուսվելով շուլավէրցու արած քայլերից ամենքն էլ ուրախութեամբ տուեցին համախօսականներ։ Այդ համախօսականները գաւառապետը ներկայացնելով նահանգապետին խնդրել էր հաստատելու։ Նահանգապետը նկատի առնելով այդ հանգամանքը և ցանկանալով անձամբ ծանօթանալ այդ ճանապարհի կարևորութեան հետ՝ ամառս, յուլիս ամսին, նահանգական ինժեների հետ ճանապարհորդելով Շուլավէրից դէպի Ջալալ Օղլի այդ յիշեալ ճանապարհով՝ համոզվել էր, որ այդ ճանապարհը կարևոր պունկտ է կազմում առևտրի զարգանալու խնդրում, մանաւանդ աւելի կարճ է և գեղեցիկ է բնութեամբ զօրքի տեղափոխութեան համար, քան ներկայիս Եկատերինենֆէլդի խճուղին է, հաստատել է այդ համախօսականները, խոստանալով ինժեներական գործը և վառօդը ձրիաբար վերցնելու կառավարութեան հաշւին։

Գաւառապետն իր եռանդուն գործունէու-